

Յակոբ Փասկալի զաւակն է Տօբ. Վահանի Փասկալ (Ծ. 1875).  
 շրջանաւարտ Մոնրեյլիէի բժշկ. վարժ.ի: 1902էն սկսեալ կը  
 վարէ Ս. Յակոբի վանքին պաշտօնական բժշկի պաշտօնը:

ՅԱԿՈՒՅ ՔՉ. ԱՄԱՍԻԱՅԻ.— 1635ին յօրինած է Երուսաղիմաց  
 Պատմութիւն մը որ անձանօթ կը մնայ մեզ: (Նսե, էջ, 70):

ՅԱԿՈՒՅ ՔՉ. ԱՐԾԿԷՑԻ.— Փիլիպպոս կթղի 40 աշակերտնե-  
 րով Երուսաղէմ այցելութեան առթիւ՝ 1652ին՝ կը յօրինէ քեր-  
 թուածներ որոնց ձեռագիրը կը գտնուի Ս. Յակոբի Մատենա-  
 դարանը (ՄՁ. Թ. 1485). Յակոբ քհն. Արծկէացին ունի նաև  
 զանազան տաղեր, այլևայլ ձեռագիրներու մէջ (Նոր ժողով. Բ.  
 պրակ. էջ, 19—20):

ՅԱԿՈՒՅ ՔՉ. ՄԱՎԵԱՆ, ԶԷՅԹՈՒՆՑԻ.— Ծ. 1884ին, աշկ.  
 տեղւոյն ազգ. վարժի, քհն. կը ձեռնարկուի 1911ին Ստոյ  
 մէջ. ժողովուրդին հետ կը տարագրուի նախ Գոնեա, յետոյ  
 Գաթմա, Բէսուլայն, և մինչև Մուսուլ: 1918ին երկար տա-  
 ռապանքներէ յետոյ կը հասնի Պաղտատ՝ ուր տարագրե-  
 լոց ժողովին կողմէն որբանոցի տեսուչ կը կարգուի. 1918  
 նոյ. 24ին որբանոցի և այրիանոցի կարաւանին հետ իբր  
 հոգեւոր հովիւ Գեկտ. 18ին կը հասնի Բոր-Սայիտ՝ ուր կ'ստանձ-  
 նէ այրիանոցի հսկողութիւնը, Եփրատոսի առաջնորդ Թոր-  
 գոմ Սրբազանի կողմէն կը կարգուի առ. փոխանորդ Քէմ-  
 բի գաղթական ժողովուրդին. Բոր-Սայիտէն կը մեկնի Տէօրթ  
 Եօլ ուր կը քահանայագործէ երկու տարի: Կիլիկիոյ պար-  
 պուստին հետեւանքով կ'անցնի Ալեքսանտրէթ եւ հոնկէ ալ  
 1922 Մայիս 12ին կը հասնի Երուսաղէմ, Ս. Յակոբի վանքը ուր  
 կը ծառայէ Ս. Տեղեաց երբեմն ալ կը վարէ ուխտաւորաց հիւ-  
 րընկալութեան պաշտօնը: 1927 Մայիս 26ին կը կարգուի հո-  
 գեւոր հովիւ Հայֆայի հայ գաղութին և ցայժմ կը մնայ նոյն  
 պաշտօնին մէջ:

ՅԱԿՈՒՅ ՔՉ. ԶՈՒՂԱՅԵՑԻ.— Զուղայի Ամենափրկչեան վան-  
 քի մատենագարանին մէջ կը գտնուի Մահան Առաքիլութեանց  
 անուամբ ձեռագիր մը, զոր ընդօրինակած է Յակոբ քհն. 1686  
 ին. նոյն ձեռագիրին յիշատակարանին մէջ տեղւոյն Առաջնորդ  
 Դաւիթ եպս.ի ներբողանքը գրած ժամանակ, հետեւեալ բառերով  
 կը նկարագրէ իր Ս. Երուսաղէմի ըրած այցելութիւնը. «Քանզի